Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) հայտարարում է մրցույթներ՝ Մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

1. Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 67-3.2-39)

Մասնակցում է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում կառուցապատման աշխատանքների կազմակերպմանը, կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառությունների ապահովմանը, քաղաքաշինական գործունեության հսկողությանը, համայնքների վարչական սահմաններից դուրս տարածքներում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների կատարման, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործման, կանխարգելման, ինքնակամ շինարարության կասեցման վերահսկմանը: Քաղաքաշինության բնագավառում մասնակցում է համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներին և համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վերահսկողությանը: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
* «Շինարարություն և ճարտարապետություն» կամ «Գեոդեզիա (երկրաբաշխություն) և քարտեզագիտություն» մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն :

Մրցույթը կկայանա 10.10.2017թ. ժամը 11:00-ին, Մարզպետարանի շենքում (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16)

2. Զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 67-3.1-15)

Իրականացնում է մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության, զորահավաքային նախապատրաստության մասով՝ պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստման աշխատանքները: Մասնակցում է մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրերի և զորահավաքային պլանների մշակման, զորահավաքային պլանների կատարման, ինչպես նաև զորահավաքային ծավալման ուսումնական վարժանքների կազմակերպման և իրականացման աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
* բարձրագույն կրթություն:

Մրցույթը կկայանա 10.10.2017թ. ժամը 14:00-ին, Մարզպետարանի շենքում (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16)

3. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 67-3.3-15)

Մասնակցում է մանկուց հաշմանդամ երեխաների, բուժական հաստատություններում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում գտնվող երեխաների հաշվառմանը:Երեխայի կյանքին կամ առողջությանը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ միաժամանակ մասնակցում է երեխային ծնողներից վերցնելու, տեղավորելու և դատարան հայց ներկայացնելու աշխատանքներին: Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, մասնակցում է այդ երեխաներին ուսումնական հաստատություններում ընդգրկելու գործընթացին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
* «Սոցիալական աշխատանք» կամ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ, կամ «Առողջապահություն» մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն:

Մրցույթը կկայանա 10.10.2017թ. ժամը 16:00-ին, Մարզպետարանի շենքում (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16)

4. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 67-3.2-46)

Մասնակցում է ՀՀ Շիրակի մարզի /այսուհետ՝ Մարզ/ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգմանը և պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքի և պարտադիր լիազորությունների կատարման վերահսկողությանը, տեղական ինքնակառավարման

մարմինների լիազորությունների նկատմամբ վարչական հսկողության իրականացման ամենամյա աշխատանքային ծրագրի նախագծի կազմման աշխատանքներին, համայնքների ղեկավարների աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխության և լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված աշխատանքների իրականացմանը, համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանի վարման, համայնքային ծառայողների վերապատրաստման խմբերի կազմավորման, համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների ամփոփման, համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող և պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ տեղեկությունների ամփոփման աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
* բարձրագույն կրթություն:

Մրցույթը կկայանա 11.10.2017թ. ժամը 11:00-ին, Մարզպետարանի շենքում (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16)

5. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 67-3.2-10)

Աջակցում է ՀՀ Շիրակի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսային նախահաշիվների ծրագրավորմանը, մարզում դպրոցական տարիքի երեխաների հաշվառման, նրանց ուսումնական գործընթաց ընդգրկման, հանրակրթական հաստատությունների դասարանների կոմպլեկտավորման աշխատանքներին, մասնակցում է մարզի պետական ուսումնական հաստատությունների ջեռուցման, գույքավորման և հիմնանորոգման աշխատանքների կազմակերպմանը: Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
* «Կրթություն» մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն:

Մրցույթը կկայանա 11.10.2017թ. ժամը 14:00-ին, Մարզպետարանի շենքում (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16)

6. Իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 67-3.3-13)

Մասնակցում է մարզպետարանում նախապատրաստվող իրավական փաստաթղթերի ձևակերպմանը, դատական ատյաններում մարզպետարանի շահերի պաշտպանությանը, դատական ատյաններ ուղարկվող փաստաթղթերի կազմման աշխատանքներին, իրավաբանական խորհրդատվության տրամադրմանը: Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ, մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝
* «Իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

Մրցույթը կկայանա 11.10.2017թ. ժամը 16:00-ին, Մարզպետարանի շենքում (ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16)

1-5 կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

* քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
* սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված, իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
* անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

* * *

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ,
* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ, կամ համապատասխան տեղեկանք,
* մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
* անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթներին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 20.09.2017թ.:

Մրցույթներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ (ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16, հեռ. 4-90-00-156):